



WESTERN DIOCESE OF
THE ARMENIAN CHURCH OF NORTH AMERICA

Հայաստանեայց Եկեղեցի Հիմնադրանքի Ամերիկայի Երեմյեան Թեմ

HIS EMINENCE ARCHBISHOP HOVNAN DERDERIAN, PRIMATE

**ՈՂՋՈՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԱՆՈՒՇԱԽԱՆ ԱՐԲԱՀԱՄԵԱՆ
ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԱԶԳԱՆՈՒԷՐ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ**

Հայց. Եկեղեցւոյ Արեւմտեան Թեմի Առաջնորդարանէն մեր օրհնութիւններն ու սիրալիր ողջոյնները կը յղենք Անուշաւան Աբրահամեան Կրթական Հիմնադրամին՝ քաջառողջութեան եւ արեւշարութեան լաւագոյն մաղթանքներով:

Որքան գնահատելի է, որ ազգանուէր եւ հայրենասէր Մեծայարգ Տէր եւ Տիկին Անուշաւան Աբրահամեաններ չորս փարի առաջ գեղեցիկ գաղափարը յղացած է հաստատելու հիմնադրամ մը, որու միջոցաւ Մայր Հայրենիքի մէջ յարուկ ուշադրութիւն դարձնէ Երկրորդական Վարժարաններուն եւ արհեստագործական հաստատութիւններուն, որպէսզի նորոգութիւններ կատարուէին եւ սրբեղծուէին արդիական պայմաններ եւ մեր ժողովուրդի զաւակները ձեռք բերէին մասնագիտութիւն եւ այս ձեւով թէ՛ օգտակար հանդիսանային իրենց ընտանիքներուն եւ թէ՛ ալ Հայրենիքի բարգաւաճման նուիրական առաքելութեան:

Հիմնադրամի Վարչութիւնը Աբրահամեան ամուլի գլխաւորութեամբ քաջաբար լծուած է իր նախաձեռնած բոլոր ծրագիրներու իրագործման:

Անուշաւան Աբրահամեան Կրթական Հիմնադրամի 4րդ Տարեկան Ճաշկերոյթի բարեբաստիկ առթիւ, մեր ջերմ շնորհաւորութիւնները կը յայտնենք եւ կոչ կ'ուղղենք քաջալերելու եւ նիւթապէս օժանդակելու հիմնադրամի ծրագիրներուն: Թող Աստուած օրհնէ ձեզ եւ յարաբել յաջողութիւն պարգեւէ ձեզի:

Սիրոյ Ողջունիւ եւ Օրհնութեամբ,
Աղօթարար՝

ՅՈՎՆԱՆ ԱՐԹԵՂԻՍԿՈՂՈՍ
Առաջնորդ

Պըրպէնք, Հոկտ. 20, 2008